Սայաթ Նովա

Ուստի՞ գու քաս, դարիք բըլբուլ

Արութինի ասած, թասլիք:

Ուստի՞ գու քաս, դարիք բըլբուլ,
Դու մի՛ լաց լի, յի՛ս իմ լալու.
Դու վարթ պըտռե, յի՛ս գոգալին,
Դու մի՛ լաց լի, յի՛ս եմ լալու:

Արի բըլբուլ խո՛սի քարը,
Օխնըվի քու Էկած սարը.
Քի վարթն էրից, ինձ իմ յարը,
Դու մի՛ լաց լի, յի՛ս իմ լալու:

Ման իմ գալի դիդարի հիդ,
Վունց դարիք բըլբուլ խարի հիդ.
Դու վարթի հիդ, յիս յարի հիդ,
Դու մի՛ լաց լի, յի՛ս իմ լալու:

Սալըբու նըման կանաչ իմ,
Յիկ, խո՛սի՝ ձայնիդ ճանանչ իմ.
Դու վա՛րթ կանչե, յիս յա՛ր կանչիմ,
Դու մի՛ լաց լի, յի՛ս իմ լալու:

Ղարիք բըլբուլ՝ ձայնըդ մալում,

Յիս ու դուն էրվինք մե հալում.
Սայաթ Նովեն ասաց՝ զա՛լում,
Դո՛ւ մի՛ լ՛աց լի, յի՛ս իմ լալու: